# Կինը և քաղաքականությունը

Ամենամսյա անվճար հավելված

Դեկտեմբեր, 2007թ.




Բիրգիտա Ուիսթրանդ.

«Ձեր հասարակությունը երբեք չի տեսել համախմբված կանանց զորությունը»:

էջ 3

## Փաստաշար

### «Ճնշող» վիճակագրություն

■ Բռնի մահով զոհված կանանց մինչև 70%-ին սպանել են իրենց ամուսինները կամ զուգընկերները:

■ Աշխարհում նվազագույնը յուրաքանչյուր երրորդ կին (այսինքն՝ մեկ միլիարդից ոչ պակաս կանայք) կյանքում թեկուզ մեկ անգամ ենթարկվում է ծեծի, սեռական հարաբերությունների հարկադրանքի կամ հալածանքների այլ ձևերի: Որպես կանոն՝ վիրավորողը կնոջ հարազատներից կամ ծանոթներից մեկն է:

■ Աշխարհի բնակչությանը նվազագույնը 60 միլիոն աղջիկ է պակասում, ովքեր «ֆիլտրվել» են ընտրողական արհեստական վիժումներով կամ հարկ եղած խնամքի բացակայությամբ, քանի որ համարվում է, որ նրանք պակաս կարևոր են, քան տղաները:

■ Աշխարհում 82 միլիոն աղջիկներ ամուսնանում են 10-17 տարեկանում:

■ Աշխարհում ավելի քան 135 մլն աղջիկներ ու կանայք ենթարկվել են սեռական օրգանների խեղման («կանանց թլպատման»): Այս ծեսը գոյություն ունի Աֆրիկայի ավելի քան 28 երկրներում, ինչպես նաև մի շարք եվրոպական երկրներում՝ միգրանտների համայնքներում:

■ ԱՄՆ-ում յուրաքանչյուր 15 վայրկյանը մեկ կինը ենթարկվում է ծեծի. որպես կանոն՝ ամուսնու կամ զուգընկերոջ կողմից:

■ Ըստ ռուսաստանյան ոչ կառավարական կազմակերպությունների տվյալների՝ Ռուսաստանի Դաշնությունում 36 հազար կանայք ամեն օր ենթարկվում են ծեծի ամուսինների կամ զուգընկերների կողմից: Ամեն տարի ամուսնու, զուգընկերների, մտերիմ մարդկանց ձեռքով զոհվում է 14 հազար կին:

■ Ամեն հինգ օրը մեկ Իսպանիայում մեկ կին է մահանում իր զուգընկերոջ ձեռքով:

■ Մեծ Բրիտանիայում ամեն շաբաթ ամուսինների ու զուգընկերների ձեռքով զոհվում է նվազագույնը երկու կին:

■ Ֆրանսիայում ամեն տարի բռնության զոհ են դառնում 25 հազար կանայք:

■ Հնդկաստանում հարսնացուի օժիտի հաշվին հարստանալու սովորության հետ կապված մահվան թիվը հասնում է տարեկան 15 հազարի: Այս կանանց մեծ մասը զոհվում է խոհանոցում հրդեհի հետևանքով, ինչը ներկայացվում է որպես դժբախտ պատահար:

■ Իրաքում 2003 թ.՝ ակտիվ մարտական գործողությունների փուլի ընթացքում և ավարտից հետո, միայն Բաղդադում իրավապաշտպաններն արձանագրել են 8 տարեկանից սկսած կանանց ու աղջիկների բռնաբարության 400 փաստ:

■ Սիրիայում, որտեղ ապաստանել է Իրաքից 1,4 մլն փախստական, երիտասարդ իրաքցի աղջիկներին հանգստյան օրերին «կնության են վերցնում»:

■ Առողջապահության համաշխարհային կազմակերպության անանուն հարցման տվյալներով՝ 20-ից մինչև 70% կանայք, ովքեր տուժել են բռնությունից, երբեք և ոչ մեկին չեն խոստովանել դա:

■ Իռլանդիայում ոստիկանություն է դիմում ֆիզիկական բռնության ենթարկված կանանց միայն 20%-ը:

■ Ռուսաստանում ընտանեկան բռնությունից տառապող կանանց 40%-ը երբեք օգնության համար չի դիմում իրավապահ մարմիններ:

■ Մեծ Բրիտանիայում բռնաբարության փաստի մասին ոստիկանություն է հաղորդում տուժածների միայն 13%-ը:

■ 79 երկրներում ընտանեկան բռնության դեմ օրենքները կամ բացակայում են, կամ դրանց մասին ոչինչ հայտնի չէ:

■ Մատչելի տեղեկատվության վերլուծությունը ցույց է տվել, որ ամուսնության մեջ բռնաբարությունը հանցագործություն է համարվում միայն աշխարհի 51 երկրներում:

■ Բոլիվիայում, Կամերունում, Կոստա Ռիկայում, Եթովպիայում, Լիբանանում, Պերուում, Ռումինիայում, Ուրուգվայում և Վենեսուելայում, քրեակատարողական օրենսգրքի համաձայն, բռնացողը կարող է խուսափել պատժից, եթե զոհին առաջարկի ամուսնանալ և հասնի նրա համաձայնությանը:





# «Ակտիվության 16-օրյակ ընդդեմ կանանց նկատմամբ բռնության»

## Նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը



Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի պատմությունը ներառում է մի քանի նշանավոր տարեթվեր, որոնցից յուրաքանչյուրը կապված է որոշակի իրադարձության հետ: 1999 թ. ՄԱԿ-ը նոյեմբերի 25-ը պաշտոնապես հռչակեց Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր և առաջարկեց կառավարություններին, միջազգային և ոչ կառավարական կազմակերպություններին այդ օրն անցկացնել միջոցառումներ՝ հրավիրելով հասարակության ուշադրությունը այս խնդրի վրա: Օրվա ընտրությունը պատահական չէր. նոյեմբերի 25-ը երկար տարիներ նշվում էր որպես Միրաբել քույրերի հիշատակի օր: Նրանք պայքարում էին Դոմինիկյան Հանրապետությունում քաղաքական վարչակարգի դեմ և 1960 թ. դաժանորեն սպանվեցին բռնապետ Ռաֆայել Տրուհիլիոյի հրամանով: Ի դեպ, այս ողբերգական իրադարձություններն ընկած են «Թիթեռների ժամանակները» հայտնի ֆիլմի հիմքում:

# Նրանք զանգում և պարզապես պատմում են, բայց հրաժարվում են բողոքել...

**Հանրապետության օմբուդսմեն Արմեն Հարությունյանի խոսքերով՝ այսպես են վարվում ընտանեկան բռնության զոհերը, ովքեր «թեժ գծով» դիմում են մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Ահա թե ինչու կանանց նկատմամբ բռնությունը համարվում է մարդու իրավունքների դեմ ամենաթաքնված ու անպատժելի հանցագործությունը: Միջազգային փորձագետները պնդում են, որ աշխարհում յուրաքանչյուր երրորդ կինը կյանքում առնվազն մեկ անգամ դառնում է կենցաղային կամ սեռական բռնության զոհ: Սակայն ստույգ վիճակագրություն չկա ոչ մի երկրում...**

Ահա արդեն 17 տարի՝ նոյեմբերի 25-ին, մեկնարկում է «Ակտիվության 16-օրյակ ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» ամենամյա միջազգային քարոզարշավը: Այն տևում է մինչև դեկտեմբերի 10-ը՝ խորհրդանշորեն ավարտվելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման օրը: Քարոզարշավի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է նվիրվում նաև երեք տարեթվերի:

Առաջինը **դեկտեմբերի 1-ն է՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրը:** Վիճակագրությունը վկայում է, որ կանայք գերակշռում են ՄԻԱՎ-վարակակիրների շրջանում, և ամեն տարի նրանց բաժինն ավելանում է, մանավանդ սեռական բռնությունը բարձրացնում է կանանց համար ռիսկի գործոնը:

Մեկ այլ տարեթիվ՝ **դեկտեմբերի 2-ը՝ ստրկության վերացման միջազգային օրը:** Ըստ վիճակագրության՝ թրաֆիքինգի զոհերի 77%-ը կանայք են:

Եվ վերջինը՝ **դեկտեմբերի 6-ը,** կապված է 1989 թ. Կանադայում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների հետ, երբ Մոնրեալի համալսարանի պոլիտեխնիկական ուսումնարան ներխուժած մոլագար մարդասպանի ձեռքով սպանվեցին 14 ուսանողուհիներ սոսկ այն պատճառով, որ, նրա կարծիքով, բոլոր դժբախտությունները կրթված կանանցից են:

Անցյալ տարի միջազգային հանրության դատին հանձնվեց ՄԱԿ-ի կողմից անցկացված խորացված հետազոտության արդյունքներչը՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ: Աշխարհի տարբեր անկյուններում բացահայտված այդ սոցիալական աղետի ծավալներն այնքան սարսափազդու էին, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Հի Մունը ստիպված էր հայտարարել ընդդեմ բռնության համակարգային քարոզարշավ մինչև 2015 թվականը: Այս քարոզարշավի գլխավոր առանցքը բոլոր հնարավոր եղանակներով և, նախևառաջ՝ ԶԼՄ-ներով գլոբալ քարոզչությունն է ընդդեմ կանանց նկատմամբ բռնության:

Այս առնչությամբ տրամաբանական մի հարց է ծագում. արդյոք նման քարոզչություն տարվո՞ւմ է մեր հայրենական ԶԼՄ-ներով: Չգիտես ինչու, խնդրի նկատմամբ լուրջ վերաբերմունքի փոխարեն շատ դեպքերում առաջին պլան է մղվել սարկազմը: Ի դեպ, բացարձակապես ոչ տեղին, հատկապես եթե դա վերաբերում է բռնության զոհերի համար հատուկ ապաստարաններին: Իսկ աշխատավայրում սեքսուալ ոտնձգությունների խնդիրը ընդհանրապես անեկդոտի է վերածվում: Արդյունքում՝ այս խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները սկսեցին պարզապես վախենալ մամուլից՝ նախընտրելով իրենց աշխատանքի արդյունքները ներկայացնել նեղ մասնագետների շրջանում: Չնայած հասարակական հատվածի վարքագծի այս մարտավարությունն ամեն դեպքում չի կարելի արդարացնել:

Հայաստանը չի դասվում այն երկրների շարքին, որոնց շրջանցել է «կնոջ նկատմամբ բռնություն» կոչվող չարիքը, ընդ որում՝ իր դրսևորման բոլոր ձևերով՝ լինի դա «ընտանեկան բռնություն», «ոտնձգություններ աշխատանքի վայրում» կամ թրաֆիքինգ: Ընդհանրապես, այս առումով բարեկեցիկ երկրներ աշխարհում չկան, և, ինչպես ասվեց, չկա նաև ստույգ վիճակագրություն: Պատճառն ամենուրեք նույնն է. ոչ բոլոր տուժածներն են համարձակվում բարձրաձայնել իրենց հետ կատարվածի մասին, իսկ հոգեբանական կամ տնտեսական ճնշման պարագայում կանայք երբեմն չեն էլ գիտակցում, որ բռնության են ենթարկվում: Հետո ինչ, որ արգելում է ծնողներին այցելել, փող չի տալիս կամ չի թողնում աշխատել, ընտանիք է, ի՜նչ ասես՝ չի լինի: Չափազանց ուժեղ են կարծրատիպերը. «ծեծում է, ուրեմն՝ սիրում է», «ինքս եմ մեղավոր», «նա իմ ամուսինն է, իրավունք ունի»... Ուստի շատերը տարիներով ապրում են բռնության մթնոլորտում՝ թաքցնելով այն, դա համարելով աննշան մանրուք, ընդամենը ներընտանեկան հարց: Հարցեր, որոնց արձագանքները, սակայն, կարող են ողջ կյանքում հետապնդել այդ ընտանիքներում մեծացող երեխաներին: Ու եթե հավատանք հոգեբաններին, նման երեխաները մեծ մասամբ դատապարտված են երկու բարդույթի՝ կա՛մ բռնացողի, կա՛մ զոհի:

Բռնության դեմ պայքարելը, անկասկած, բարդ է և ոչ մի համաշխարհային քարոզարշավ, թեկուզ տասնամյակ տևող, չի օգնի, եթե հասարակությունը չի ցանկանում գիտակցել այս չարիքի կործանարար հետևանքները, իսկ նրանք, ովքեր կոչված են ներազդելու հասարակական կարծիքի վրա, նախընտրում են լռել և տեղի տալ կարծրատիպերին: Ի՞նչ անել: Գուցե փոխարինել նպատակադրո՞ւմը. ոչ թե 16 օր բողոքել բռնության դեմ, այլ տարվա բոլոր 365 օրերը պայքարել հանուն ամուր ու երջանիկ հայկական ընտանիքի և երջանիկ ու հաջողակ հայ կնոջ...

*Թեմայի շարունակությունը՝ 2-րդ և 4-րդ էջերում*

## Կանայք և ընտրությունները

# Ինչպե՞ս հաղթել ընտրություններում

**Թերևս այս հարցի պատասխանը կարելի է գտնել «Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թ. խորհրդարանական ընտրություններին» հետազոտության մեջ: Սակայն մինչ այդ անհրաժեշտ է հաղթահարել այն բոլոր խոչընդոտները, որոնց բախվում են կանայք ընտրական գործընթացներում:**

*«Ընտրական գործընթացների անկատարությունը, գենդերային կարծրատիպերը, քաղաքական փորձի ու ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, ցածր ինքնագնահատականը՝ ահա Հայաստանի քաղաքական կյանքում կանանց ակտիվ մասնակցությանը խոչընդոտող պատճառների ամենևին էլ ոչ լրիվ ցուցակը»*,- այս կարծիքն է հայտնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարության զարգացման հարցերով պատասխանատու **Սվեն Հոլդարը** «Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թ. խորհրդարանական ընտրություններին» հետազոտության շնորհանդեսի ժամանակ, որ տեղի ունեցավ նոյեմբերի 15-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում: Հետազոտությունն անցկացվել է այս տարի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից (նախագահ՝ Ջեմմա Հասրաթյան)՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Ասոցիացիայի փորձագետները դիտարկել են նախընտրական ու հետընտրական քաղաքական գործընթացները և կառուցել կանանց քաղաքական մասնակցության խճանկարը՝ նախընտրական ցուցակների վերլուծությունների, առաջադրված թեկնածուների հետ հարցազրույցների, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ֆոկուս-խմբերի միջոցով: Այս ամենը նրանց հնարավորություն տվեց գնահատելու իրավիճակը մի կողմից այնպիսին, ինչպիսին տեսնում են կանայք, իսկ մյուս կողմից՝ ինչպես է այն օբյեկտիվորեն երևում կողքից: Իսկ գնահատելով՝ եզրահանգումներ կատարել ապագայի համար, որը միայն մի դեպքում ավելի արդար կլինի կանանց մասնակցության առումով. եթե իրենք՝ կանայք, դրա համար ջանքեր գործադրեն: Դա է, փորձագետների կարծիքով, կանանց քաղաքական հաջողության գաղտնիքը:



**Այնուամենայնիվ, ի՞նչն է խանգարում ընտրություններում կանանց հաջողությանը: Ինչո՞ւ են կանանց թեկնածությունները մեծ մասամբ համարվում ոչ անցողիկ: Ո՞ր կանայք են առաջադրվում խորհրդարանում և ինչո՞ւ: Ի՞նչ տարիքի և ի՞նչ մասնագիտության: Քաղաքականություն մտնելու ո՞ր սցենարներն են առավել բնորոշ կանանց: Քաղաքական քվոտավորումն օգնո՞ւմ է արդյոք կանանց: Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանները կարող եք գտնել վերոնշյալ հետազոտության արդյունքների հիման վրա հրատարակված «Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թ. խորհրդարանական ընտրություններին» գրքում:**



Հետազոտության էլեկտրոնային տարբերակը երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն *և անգլերեն, դուք կգտնեք http://www.osce.org/yerevan/ կայքում:*



*Իր հետագա հրապարակումներում «Կինը և քաղաքականությունը» ավելի հանգամանորեն կանդրադառնա այդ հետազոտության նյութերին:*

## Ձեռքբել լռությունը

# Յուրաքանչյուր չորրորդ կին՝ ծանր ֆիզիկական բռնության զոհ

**«Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում» սոցիոլոգիական հարցախույզի մասնակիցների շուրջ 25%-ը խոստովանել է, որ ընտանիքում ենթարկվում է ծանր ֆիզիկական բռնության: Հարցումն անցկացրել է 2007-ի մայիս-հունիս ամիսներին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնը՝ «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության պատվերով:**

Ընդամենը հարցմանը մասնակցել է 1006 կին, որոնցից 281-ը, ինչպես պարզվել է, ծեծի է ենթարկվել ամուսնու, իսկ երբեմն էլ՝ սկեսրոջ կողմից...

Հարցումն անցկացվել է 18-75 տարեկան ամուսնացած կանանց ու ընկեր ունեցող աղջիկների շրջանում, ընդ որում, հարցվածների 3%-ը նախապես հրաժարվեց ինչ-որ տեղեկություններ տալ այն պատճառով, որ դա կարող է դուր չգալ նրանց ամուսիններին...

Հարցման մասնակիցների 61%-ը համարում է, որ պետք է անառարկելիորեն լսել իր ամուսնուն, եթե նույնիսկ կինը նրա հետ համաձայն չէ: Հարցվածների միայն 39%-ն ասաց, որ կինն իրավունք ունի իր համար ընկերներ ընտրելու...

Հարցման մասնակիցների 88%-ը համարում է, որ ընտանեկան բռնության դեպքերն ավելի լավ է լուծել տանը, այլ ոչ թե դիմել ոստիկանություն, իսկ 64%-ը որակում է այն որպես հասարակական խնդիր, որը պետք է լուծեն կառավարությունն ու հասարակությունը...

22% հարցվածները նորմալ են համարում, երբ ամուսինն արգելում է իրենց աշխատել...

Որպես հետևանք՝ ընտանեկան բռնությունը չարություն է ծնում հարցված կանանց 80%-ի մեջ, ինքնագնահատականի իջեցում՝ 48%-ի մոտ, դեպրեսիայի պատճառ է դառնում 47%-ի համար, ամոթի զգացում է առաջացնում 46%-ի մոտ և վախ՝ 42%-ի մոտ...

Հարցումն անցկացվել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Կաթոլիկ օգնության ծառայության հայկական մասնաճյուղի համատեղ ֆինանսավորմամբ:

# Այն, ինչ չի կարելի թաքցնել փակ դռների հետևում

**Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, իսկ դժբախտները՝ դժբախտ են յուրովի: Դասականի հայտնի այս խոսքը հիշվում է, երբ բացում ես հոգեբանական գիտությունների թեկնածու Կարինե Նալչաջյանի «Ընտանիքի փակ էջերը» գիրքը: Հեղինակը նկարագրում է ընտանեկան բռնության 51 դեպք և բացահայտում հնարավոր ճնշումների առնվազն 16 տեսակ: Դրանց հետևում տարբեր խավերի, տարբեր կրթության, բարեկեցիկ և ոչ այնքան ընտանիքների կանանց ճակատագրեր են:**
**Հայերի շրջանում ընդունված չէ հոգեբանին դիմելը, համարվում է, որ ընտանեկան խնդիրներից ինքնուրույն կարող են գլուխ հանել: Սակայն գրքում ներկայացված իրական դեպքերում (էթիկայի նկատառումներով փոխված են անունները և որոշ հանգամանքներ) հերոսները գտնվում են ծանր դեպրեսիայի մեջ և ի զորու չեն միայնակ այս վիճակից դուրս գալ...**



**Կարինեն 47 տարեկան է**, ունի երկու դուստր. մեկն ուսանողուհի է, մյուսը սովորում է դպրոցի ավարտական դասարանում: Ամուսինը՝ Արշակը, ծայրաստիճան ագրեսիվ է ինչպես նրա, այնպես էլ դուստրերի նկատմամբ: Նա կրթված մարդ է՝ իր ոլորտի բարձրակարգ մասնագետ: Կարինեն նկարագրում է նրա ինտելեկտուալ և մարդկային բարեմասնությունները: Սիրող ամուսիններ են եղել: Արշակը եղել է նվիրված հայր: Բայց սկզբից ևեթ չափազանց խանդոտ է եղել կնոջ հանդեպ: Տարիների հետ այդ խանդը ոչ թե նվազել, այլ ավելի ու ավելի է սաստկացել ու դարձել հիվանդագին: Բանը հասել է այնտեղ, որ ամուսինը հիմա պահանջում է համապատասխան լաբորատոր գենետիկական ստուգումներ կատարեն՝ պարզելու համար, թե երեխաներն իրե՞նն են, թե՞ ոչ: Կինը համաձայնել է գնալ այդ քայլին, սակայն դա համարում է վիրավորական իր համար և առավել ևս նվաստացուցիչ՝ աղջիկների համար: Բացի դրանից, այդ հետազոտության համար բավական մեծ գումարներ են անհրաժեշտ: Հիմա ընտանիքը, որի ֆինանսական վիճակը բարվոք համարել չի կարելի, զբաղված է այդ գումարները հայթայթելով:

Ամուսնու խանդը երբեմն սուր, ճգնաժամային արտահայտություններ է ստանում: Նա կորցնում է ինքնատիրապետումը, կնոջը ծեծում է և նույնիսկ քնած ժամանակ նրան խեղդելու փորձեր է անում: Կարինեն խոստովանում է, որ ինքն այլևս չի կարողանում գիշերները քնել, քանի որ չկա որևէ երաշխիք, որ ամուսինը գիշերը չի հարձակվի իր վրա ու սպանի: Մի անգամ արդեն այդպես եղել է, ու ինքը մի կերպ ազատվել է՝ ճանկռելով ամուսնու դեմքը: Եթե աղջիկները փորձում են միջամտել, ապա դա նրան կատաղության է հասցնում: Բոլորն ահաբեկված են: Դիմել է ամուսնու հարազատներին, որպեսզի փորձեն միջամտել: Բայց ապարդյուն:

**28 տարեկան Գոհարն** ամուսնալուծված է: Ասում է, որ իր չկայացած ընտանեկան կյանքի մեղավորը սկեսուրն է: Ամուսինը եղել է իր մոր միակ երեխան: Սկեսրայրը թույլ և անկամ անձնավորություն էր, և տանն իշխում էր սկեսուրը: Սկեսուրը համառում է և անթաքույց կերպով պնդում, որ ինքը պետք է տեղյակ լինի երիտասարդ ամուսինների կյանքի բոլոր մանրամասնություններին և շարունակ հետևում էր նրանց յուրաքանչյուր քայլին:

Ամուսնության երկրորդ տարում կյանքն ավելի անտանելի դարձավ, քանի որ Գոհարը չէր հղիանում: Բժիշկները հաստատեցին, որ նա առողջ է, և որոշակի ախտաբանական երևույթներ կան ամուսնու մոտ: Սկեսուրը չէր համակերպվում այդ մտքի հետ՝ համարելով, որ երեխա չլինելու պատճառը միայն կնոջ հետ կարող է կապված լինել, և հարսի ներկայությունը այդ տանը համարում էր լրիվ ավելորդ: Նա հատկապես դաժան էր դառնում այն ժամանակ, երբ ամուսինների միջև հարաբերությունների ջերմություն էր նկատում: Եղել են դեպքեր, երբ նա երկուսին էլ արգելել է նույնիսկ հաց ուտել: Նույնիսկ պատահել է, որ ամուսինը գիշերը գաղտնի ուտելիք է բերել, որպեսզի մի կերպ հագեցնեն քաղցը:

Որոշ ժամանակ ամուսինները տեղափոխվել են կնոջ ծնողների մոտ, որտեղ կարողացել են հանգիստ շունչ քաշել: Սակայն, ի վերջո, սկեսրոջը հաջողվել է տղային տուն վերադարձնել և բաժանել ամուսիններին: Բայց մինչև հիմա էլ նրանք դեռ օրենքով ամուսնալուծված չեն, կինը դեռ սիրում է ամուսնուն: Բայց ամուսնու կողմից լռություն է:

**Անահիտը 35 տարեկան է,** մինչև ամուսնանալն ապրել է մայրաքաղաքում, որտեղ և ստացել է բարձրագույն կրթություն: 16 տարեկանում՝ երկու ամսվա ընթացքում, կորցրել է ծնողներին և զգացել որբության ողջ դառնությունը: Ծնողների մահից հետո եղբայրները վաճառել էին հայրական տունը՝ առաջարկելով հերթով բնակվել իրենից մեծ եղբայրների տներում, մինչև «աղջիկ է, կամուսնանար, կգնար»: Եվ ահա, հարազատների միջնորդությամբ նրան ամուսնացնում են գյուղում ապրող մի երիտասարդի հետ: Աղջկա երկչոտ դիմադրությանը պատասխանել են՝ «Լավ տղա է և չի կարելի բախտը ձեռքից բաց թողնել»: Քաղաքի կյանքին սովոր աղջիկը միանգամից խրվում է գյուղական կյանքի առօրյայի մեջ, որտեղ նրան հանձնարարվում են ամենածանր գործերը. դույլով ջուր կրելուց ու այգի ջրելուց մինչև անասուններին նայելն ու գոմը մաքրելը: Այդ էին վկայում կուչ եկած ու ծերացած տեսքով այդ կնոջ սևացած եղունգներն ու ճաքճքած ձեռքերը: Հարսի նկատմամբ առանձնակի դաժան է վերաբերվում սկեսրայրը, իսկ ամուսինը, որն աշխատանքից շատ ուշ է տուն գալիս, անտարբեր է ամեն ինչի նկատմամբ. նա չի համարձակվի առարկել ծնողներին: Այնպես որ, նա հիմա ամուսնուն ոչինչ չի պատմում, չի բողոքում: Արդեն չորս անգամ վիժել է, ընդ որում՝ հղիության վերջին շրջանում: Դա ևս հարսին ստորացնելու առիթ է: Հիմա, նվաստացած, ընտանեկան հոգսերի բեռան տակ կքած, այս կինը նորից երեխայի է սպասում:

**40 տարեկան Սրբուհին** ունի երկու երեխա: Ավագ դուստրն ի ծնե տառապում է օլիգոֆրենիայից: 13 տարի է, ինչ ամուսնացած է, բայց ամուսնության հենց առաջին օրվանից հասկացել է, որ սխալվել է: Ամուսինը և սկեսուրը շատ դաժան են եղել նրա նկատմամբ: Սկեսուրը մահացել է, բայց ամուսինը շարունակում է իր դաժանությունները: Ծեծը սովորական բան է: Ընդ որում, տարիներ առաջ մի անգամ թիկունքին ուժեղ հարված է ստացել. կինը չի իմացել, որ այդ պահին ամուսինն իր հետևում կանգնած է եղել: Հարվածն ու անսպասելիությունից առաջացած ցնցումը խոր հոգեկան խեղում են առաջացրել: Սրբուհին հաճախ հալյուցինացիաներ է ունենում, նրան թվում է՝ թիկունքի հետևում մարդ կա: Այս պահին նա տանը դեպրեսիվ վիճակում է: Ժամանակ առ ժամանակ այցելում է հոգեբույժի, բայց դրական փոփոխությունները ժամանակավոր են: Անընդհատ շնչահեղձ լինելու զգացողություն ունի: Մրսում է, դողում, սառը ջրի նկատմամբ ֆոբիա ունի: Ամուսինն աշխատում է նաև գիշերային հերթափոխ, նրանց միջև որևէ շփում չկա: Սրբուհին շատ ծանր է տանում այդ խորթացումը: Մի հանգամանք ևս. նա միայն վերջերս է իմացել, որ ինքն ամուսնու երկրորդ կինն է: Առաջին կինը չի դիմացել բռնություններին ու բաժանվել է:

*Պատրաստեց Լիլիթ Եփրեմյանը*

Փորձագետի անկյուն

Բիրգիտա Ուլիսթրանդ.

# «Այս երկրում կանայք այնքան խելացի են»...

**Բիրգիտա Ուլիսթրանդի՝ Շվեդիայի խորհրդարանի նախկին պատգամավոր, իսկ այժմ՝ Uppsala համալսարանի գենդերային հետազոտությունների կենտրոնի պրոֆեսորի հետ մենք ծանոթացանք Երևանում, որտեղ նա եկել էր իբրև ԵԱՀԿ գծով փորձագետ՝ կանանց առաջխաղացման հնարավորություններն ուսումնասիրելու համար: Այս խնդրով, որը ժամանակի ընթացքում դարձավ նրա կոչումը, նա սկսեց հետաքրքրվել դեռևս դպրոցական նստարանից: Այդ շրջանին է վերաբերում նաև իրեն որպես անձ դրսևորելու և կարիերա սկսելու առաջին փորձը: «Երբ դպրոց գնացի, մտածեցի միանգամից նվաճել աշխարհը: Սակայն շատ շուտով հասկացա, որ արագ չի ստացվի: Այդ ժամանակ ես սկսեցի սովորել և զգալի հաջողությունների հասա ուսման մեջ,- ասում է նա: - Տարիների ընթացքում հասկացա, որ կարող եմ նաև օգնել ուրիշներին ճանապարհ հարթելու ու կիսել նրանց հետ իմ փորձն ու դիտարկումները»: Այսպես կանանց առաջընթացն ապահովող ուղիների փնտրտուքներում նա հանգեց գենդերային հետազոտությունների: Աշխատել է  տարբեր երկրներում, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, SIDA-ի և այլ միջազգային կառույցներում:**

**Հայաստան այցելության նրա նպատակն է՝ պատրաստել զեկույց հանրապետությունում գենդերային իրավիճակի մասին և դրա հիման վրա գործնական հանձնարարականներ տալ: Կանանց կյանքի իրական պատկերը, նրանց կարիքներն ու հիմնախնդիրները բացահայտելու, ինչպես նաև դրանց լուծման եղանակներ գտնելու համար Բիրգիտան եղել է Հայաստանի տարբեր մարզերում՝ ներառյալ հեռավոր անկյունները՝ Կապան, Սիսիան, Գորիս: Բանավեճեր և հարցազրույցներ է անցկացրել հասարակության տարբեր խավերի կանանց հետ: Համաձայնելով ինձ հետ կիսել իր դիտարկումները՝ նշեց, որ ամենաշատը իրեն հետաքրքրել են կին քաղաքական գործիչները և գործարարները:**



- Հանդիպելով ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց հետ՝ ես շարունակ փորձում էի պատասխանել այն հարցին. ինչո՞ւ են կանայք իրենց այդքան պասիվ պահում, ինչո՞ւ են այդքան քիչ ներկայացված խորհրդարանում և բիզնեսում, ի վերջո, ինչո՞ւ բարձրաձայն չեն հայտարարում իրենց իրավունքների մասին: Դրա հետ մեկտեղ ես հանդիպեցի այնքան զարմանալի կանանց: Նրանք ինձ շատ ընդունակ թվացին, բազմաթիվ մտահղացումներ ունեին: Այս երկրում կանայք այնքան խելացի են... և, իմ կարծիքով, նախադրյալներ կան, որ իրավիճակը վաղ թե ուշ կփոխվի, և նրանք ավելի մեծ ազդեցություն կունենան պետական կառավարման գործում: Միայն թե դրա համար պետք է որոշակի քայլեր ձեռնարկել: Ինձ պատմեցին, որ անցկացվում են գենդերային դասընթացներ, սեմինարներ և կլոր սեղաններ, բայց այդքանը բավարար չէ: Իրավիճակը պետք է վերափոխվի հենց հասարակության կողմից:

**- Իսկ ի՞նչն է Ձեր կարծիքով կասեցնում կանանց առաջխաղացումը քաղաքականության մեջ, կարիերայում, բիզնեսում:**

- Իմ բոլոր զրուցակիցները խոսում էին հայկական մտածելակերպի՝ որպես զսպող գործոնի մասին, որը խոչընդոտում է քաղաքական և հասարակական կյանքին կանանց լիարժեք ինտեգրումը: Ստիպված եմ նրանց հետ համաձայնել, քանի որ կնոջ դերը սահմանափակված է, լինի դա ծնողների, ամուսնու թե սկեսրոջ տանը... Բացի այդ, կնոջ նկատմամբ կիրառվում են երկակի ստանդարտներ և անհավասար պահանջներ: Դիցուք, ձեր հասարակության մեջ տղամարդը նախքան ամուսնությունը կարող է սեռական կապեր ունենալ, այն դեպքում, երբ կնոջը դա չի թույլատրվում: Կամ՝ ամուսնացած տղամարդկանց դարձյալ ամեն ինչ թույլատրվում է, կնոջը՝ ոչինչ: Տղամարդկանց համար շատ հաճախ կարևոր են միայն երեխաները, այլ ոչ կանայք: Այս ամենը զարգացնում է կանանց մեջ ցածր ինքնագնահատական:

**- Իսկ մի՞թե մտածելակերպի նման դրսևորումներ չկան մյուս երկրներում, և ո՞րն է այդ դեպքում ելքը:**

- Կարծում եմ՝ համաշխարհային պատմության մեջ ու պրակտիկայում կան շատ օրինակներ, որ մտածելակերպի գործոնը կարելի է հաղթահարել կամ շրջանցել: Աղջիկների ցածր ինքնագնահատականի ակունքները ընտանեկան դաստիարակությունից են գալիս: Հայ հասարակությունը պետք է հավասարապես գնահատի տղամարդկանց ու կանանց: Ձեր կյանքում շատ բաներ կան, որոնք ձեզ համար գուցե աննկատ են, սակայն կողքից լավ են երևում: Օրինակ՝ շատ ընտանիքներում, հատկապես գյուղական վայրերում, սեղանի շուրջը լավագույն պատառը տրվում է հորը, որդուն, ապա սկեսրոջը, հարսին ու աղջկան: Ու կարող է այնպես լինել, որ ընտանիքի ոչ բոլոր կին անդամներին ճաշ կամ համեղ կտոր հասնի: Իմ կարծիքով՝ այս ավանդույթը սովորեցնում է կնոջը համակերպվելու այն մտքին, որ դու վերջինն ես, այն դեպքում, երբ տղաներն իրենց առաջինն են համարում: Հենց դա է, որ բացասաբար է անդրադառնում կնոջ ինքնագնահատականի վրա և ստիպում նրան համակերպվել գոյություն ունեցող կարգի հետ: Հետագայում կանայք նահանջում են ցանկացած պայքարից, համարում, որ այն իրենց համար չէ, որ նրանք չեն կարող հաղթահարել այս կամ այն խոչընդոտը:

**- Եվ այդ պարագայում ի՞նչ պետք է անեն կանայք:**

- Ես ծանոթացա խորհրդարանական ընտրություններին վերաբերող բազմաթիվ նյութերի, որոնցից երևում է, թե կանայք ինչ հսկայական նախապատրաստական աշխատանք են կատարում այդ բնագավառում և, այդուհանդերձ, փոխարենը ոչինչ չեն ստանում: Ես նկատի ունեմ խորհրդարանում տեղերը: Կանայք պետք է ավելին պահանջեն, պայմաններ առաջ քաշեն, անթաքույց հայտարարեն իրենց իրավունքների խախտումների, խտրականության փաստերի մասին, որտեղ էլ դրանք լինեն: Նրանք պետք է խիզախ լինեն և այս ուղղությամբ միահամուռ աշխատեն: Ձեր հասարակությունը երբեք չի տեսել համախմբված կանանց զորությունը, որոնք պատրաստ են պայքարել իրենց իրավունքների համար: Ավելին, ձեզանում չի լսվում կնոջ ձայնը, ոչ մի կին այն չի բարձրացրել ի պաշտպանություն իրեն և չի հայտարարել, որ իր հետ վարվում են ոչ որպես հավասարը հավասարի հետ:

Բացի այդ, թեև ձեր խորհրդարանում կանայք քիչ են, նրանք չեն համագործակցում միմյանց հետ: Ու այնքան ժամանակ, քանի դեռ նրանք և կանանց հասարակական կազմակերպությունները չեն համագործակցի և հանդես չեն բերի կանացի համերաշխություն, երկրում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա: Կանայք պետք է սովորեն ինքնուրույն որոշումներ կայացնել և թույլ չտան իրենց օգտագործել: Այդ խնդրի արմատները նույնպես դաստիարակությունից են գալիս. եթե կինն ամենասկզբից թույլ է տալիս, որ իր խնդիրները լուծի հայրը կամ եղբայրը, ապա հետագայում ամուսինը կամ գործընկերը կլուծեն դրանք կնոջ փոխարեն...

## «Կանայք հեռու են նույնիսկ ոչ ֆորմալ ինստիտուտներից»

**Դեկտեմբերի 4-ին Երևանում հանրությանը ներկայացվեց ԵԱՀԿ  աջակցությամբ իրականացված «Կանանց հզորացումը և համագործակցությունը Հայաստանում՝ Սյունիքի մարզի օրինակով» գնահատողական զեկույցը:**

Հեղինակների՝ Բիրգիտա Ուլիսթրանդի ու Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի բաժնի պետ Արմինե Մխիթարյանի գնահատականներն անսպասելի չէին. կանանց ներկայացվածությունը քաղաքական և տնտեսական կյանքում խիստ անբավարար է, չկա կանանց միավորված շարժում: Ոչ ֆորմալ տնտեսական և քաղաքական ցանցերի զգալի ծավալը վերահսկում են տղամարդիկ, որոնք նաև կանանց փոխարեն կայացնում են կարևոր որոշումներ: Գյուղական բնակավայրերում կանայք անտեղյակ են իրենց իրավունքներին և չունեն բավականաչափ ռեսուրսներ ու կապեր ակտիվ տնտեսական և քաղաքական կյանք վարելու համար:

*«Հայաստանի նման փոքր երկրներում բիզնեսում կամ քաղաքականության մեջ հաջողության հասնելու համար չափազանց մեծ է այսպես կոչված «շրջապատի» դերը, դա ոչ ֆորմալ ինստիտուտ է, որից կանայք նույնպես հեռու են»,-* կարծում են փորձագետները: Զեկույցում ներկայացվում են նաև գործնական առաջարկություններ, մասնավորապես՝ Սյունիքում հեղինակներն առաջարկում են բացել ռեսուրսային կենտրոններ կանանց տնտեսական և քաղաքական կարիերային աջակցելու համար: Զեկույցը կներկայացվի նաև Կապանում:

Կարծիքների խաչմերուկ

# «Էդ ինչո՞ւ Ռայսը կարող է ղեկավարել, իսկ մեր Անահիտը կամ Մարիամը՝ ոչ»

**Շուտով նախագահական ընտրություններ են, և, ինչպես հայտնի է, երկրի բարձրագույն պաշտոնին հավակնողների թիվը ավելի քան պատկառելի է: Սահմանադրությամբ ընձեռված այդ իրավունքից սակայն ցանկանում են օգտվել միայն տղամարդիկ: Կարո՞ղ է արդյոք կինը հայկական պետության գլուխ կանգնել: Եթե այս հարցն ինչ-որ մեկի մոտ ծագում էլ է, ապա միայն սոցիոլոգների կամ լրագրողների խնդրանքով: Առաջինները, ինչպես հայտնի է, արձանագրում են. կին նախագահ ունենալու մտքի հետ հաշտվում է հարցվածների ոչ ավելի քան 25%-ը: Երկրորդները, թեպետև չեն հաշվել «կողմ»-ն ու «դեմ»-ը, սակայն բախվում են այս հարցի առնչությամբ հույզերի լիակատար բազմազանության. «էդ ի՞նչ եք ասում, չլինելու բան է: Մենք էն երկիրը չենք, ո՛չ էլ էդ մտածողությունն ունենք»: Ճիշտ ժամանակն է նկատելու, որ հարևան երկրներից մեկում ոչ այնքան առաջադեմ մտածելակերպը ամենևին էլ չխանգարեց կնոջը ճեղքել պատնեշը և որպես նախագահ առաջադրվել: Բացի այդ, վկայակոչելով այդ նույն մտածելակերպը՝ գուցե արժի առաջնորդվել նրա մյուս առանձնահատկությամբ. «Էդ ինչո՞ւ Ռայսը «նահանգներում» կամ որևէ կին այլ երկրում կարող է ղեկավարել, իսկ մեր Անահիտը, Մարիամը կամ Հրանուշը՝ ոչ»: Մի խոսքով, մտածելակերպն այստեղ ոչ մի դեր չունի: Ուրեմն էլ ի՞նչը:**

Նախագահի համար գլխավորը, իհարկե, ոչ թե սեռն է, այլ խելքը, ղեկավարելու ունակությունները և առաքինությունների մի երկար ցուցակ, որոնցով ժողովուրդն օժտում է պետության առաջին դեմքին իր սպասումներում: Կարո՞ղ է արդյոք այս հատկությունների կրողը կին լինել: Իմ զրուցակիցներից շատերը չեն տեսնում կնոջը նախագահի կարգավիճակում, որովհետև... խղճում են նրան. *«Տղամարդիկ նրան «կուտեն»,-* ասում են նրանք: Մյուսները խորհուրդ են տալիս գեղեցիկ սեռին հարթել ճանապարհը դեպի քաղաքական Օլիմպոս աստիճանաբար: *«Որպես սկիզբ հարկ է ուժերը փորձել ավելի ցածր պաշտոններում: Ապա նոր հավակնել ամենաբարձր նշաձողին: Երկրում ընդամենը մեկ կին նախարար կա, և երբեք չի եղել կին վարչապետ: Քաղաքական այս «պաշարով», ավելի ճիշտ՝ դրա լիակատար բացակայությամբ ինչպե՞ս կարելի է նախագահի թեկնածու դառնալ»,-* այսպես է բացատրում իր դիրքորոշումը Արամ Գալստյանը՝ մայրաքաղաքի բուհերից մեկի ուսանողը:

*«Այսօրվա վիճակով ոչ մի կին մեր հասարակության մեջ առանցքային դեր չի կատարում: Էլ որտեղի՞ց կարող է թեկնածու հայտնվել: Չեմ հասկանում...»,-* համակարծիք է նրան փոքր ձեռներեց Վարդան Մարտիրոսյանը, ով վստահ է՝ վայել չէ կնոջ ուսերին բարդել այն խնդիրները, որոնք այսօր ծառացած են երկրի առջև: *«Համոզված եմ՝ ոչ մի կին առաջին ժամկետի կեսն էլ չի ձգի: Գլուխն առած կփախչի, ուրիշներին էլ խորհուրդ չի տա»:*

Իհարկե, ուշագրավ տեսակետ է, սակայն մի՞թե շատ են պատմության մեջ դեպքերը, երբ ինչ-որ մեկը փախել է իշխանությունից: Եվ ինչո՞ւ տղամարդկանց պարագայում հնարավոր է հիմնախնդիրների ու իշխանության խաղաղ գոյակցումը, իսկ կանայք դատապարտված են հրաժարվել իշխանությունից՝ մնալով հիմնախնդիրների հետ:

Դառնանք, սակայն, իմ զրուցակիցներին, որոնք խիստ դժվարացան կին թեկնածուների անուններ հիշատակել: Եթե նույնիսկ ինչ-որ մեկի անունն էլ տալիս էին, ապա վերապահումով, որ նրան իրենց ձայնը չեն տա, քանի որ կնոջ հաղթելու հնարավորությունները շատ քիչ են: *«Ինձ թվում է՝ կին թեկնածուն պարզապես խաղազինվոր կլինի որևէ մեկի ձեռքին: Գուցե պատգամավորի կամ նախարարի մակարդակում կինն ինչ-որ առումով ընդունելի է: Սակայն որպես պետության առաջին դեմք՝ Աստված մի արասցե»,-* հայտարարեց տնային տնտեսուհի Անահիտ Մինասյանը:

Նկատենք, որ ըստ սոցիոլոգների՝ կանայք իրոք թերահավատորեն են տրամադրված կին թեկնածուների նկատմամբ: «Կտա՞ք արդյոք ձեր ձայնը կնոջը, եթե ընտրություն կատարեք երկու հավասարազոր՝ տղամարդ և կին թեկնածուների միջև» հարցին բացասական է պատասխանում կին հարցվածների 65%-ը և տղամարդկանց 70%-ը: Սակայն հուսահատվել պետք չէ. կա նաև հարցվածների 7%-ը, որը պատրաստ է քվեարկել կնոջ օգտին, և 27%-ը, որը տարբերություն չի դնում սեռերի միջև:

Ուրախալի է, որ կանանց առաջընթացը խոչընդոտող փաստարկների մեջ չինչեց ավանդական պատճառաբանությունը՝ իբր, նախագահի պաշտոնը «կնկա խելքի բանը չի»: Ընդհակառակը, շատերն ընդգծում էին, որ հայուհիներն ինտելեկտի պակաս չունեն: Ուրիշ հարց է, որ տղամարդ զրուցակիցներս համարում են, որ այն ավելի լավ է կիրառել... ընտանիքի սահմաններում: Իմ ակնարկը, որ պետությունը նույն ընտանիքն է, նրանց չհամոզեց: *«Այո, պետությունը ընտանիք է: Բայց մասշտաբնե՞րը: Շատ կանայք նույնիսկ իրենց ընտանիքում չեն կարողանում ամուսնուն, երեխաներին պատասխանատվության կանչել: Էլ ո՞ւր մնաց երեքմիլիոնանոց բնակչությամբ զբաղվի: Դուք կասեք՝ նախագահը բազմաթիվ խորհրդականներ ու օգնականներ ունի, միևնույն է, որոշում ընդունելու պատասխանատվությունն ընկած է նրա ուսերին: Իսկ ինչպե՞ս կարող է կինը որոշում կայացնել, եթե ինքը երբեմն նույնիսկ չգիտի, թե ինչ է ուզում»,-* զայրանում է գրող Արմեն Մկրտումյանը:

Չօգնեցին նաև միջազգային մակարդակի գործիչների՝ Մարգարեթ Թետչերի ու Ինդիրա Գանդիի մասին հիշատակությունները: Հակառակը, այդ օրինակները շատերին վախեցնում են: *«Հերիք չէ, որ տղամարդը հիմա խիստ ճնշված է ընտանիքում. ստիպված է կնոջ հրամանով տուն փող բերել, երեխաներին նայել, քիչ է մնում՝ ճաշ էլ պատրաստի: Ու հիմա էլ նույնը կարող է մեզ սպառնալ պետակա՞ն մակարդակում: Ո՛չ մի դեպքում,-* ընդվզում է ինժեներ Կարեն Դավթյանը: - *Մեր բոլոր բարոյական արժեքները վաղուց հետին պլան են մղվել: Կինս ինձնից կրկնակի շատ է փող աշխատում: Ու եթե առաջ նա իմ վիզն էր, ապա հիմա գլուխն է: Իսկ ի՞նչ տեղի կունենա, եթե կինը կանգնի պետության «ղեկի» առաջ: Այդ դեպքում ես ոչ միայն վիզը չեմ լինի, այլև չեմ համարձակվի ողնաշարի դերին հավակնել»:*

Լսածներս ի մի բերելով՝ եզրակացնում եմ. մեզանում պետության «ղեկը» կնոջը չեն վստահի երեք փոխբացառող պատճառներով: Նախ՝ նրանք «մեղք են», երկրորդ՝ չեն կարողանա հաղթահարել դժվարությունները: Երրորդ՝ այդպիսի կանայք ասպարեզում չկան: Այդ դեպքում հասկանալի չէ՝ ինչո՞ւ են նրանցից վախենում:

## Ի դեպ

Հայտնի է, որ Գերմանիայում վերջին ընտրություններից առաջ ՔԴՄ/ՔՍՄ վարկանիշը 36% էր, մինչդեռ կուսակցության առաջնորդի՝ Անգելա Մերկելի անհատական վարկանիշը զիջում էր: Ընտրվելուց հետո իրավիճակը փոխվեց. կանցլեր Անգելա Մերկելը 75% վարկանիշով ամենահեղինակավոր քաղաքական գործիչն է, մինչդեռ կուսակցության վարկանիշը մնացել է նույնը: Կարծում ենք՝ մինչև հաջորդ նախագահական ընտրությունները ՀՀ-ում գործող կուսակցությունները կհասցնեն բացահայտելու «հայկական Անգելա Մերկելին» և կհաղթեն կին առաջնորդի գլխավորությամբ: Թեև օրերս «Ազգ» օրաթերթը դիմել է ընդդիմադիր կուսակցություններին՝ առաջարկելով միաբանվել Լարիսա Ալավերդյանի շուրջը: Մեզ համար դա հաճելի անակնկալ էր: Փաստորեն արդեն այսօր կին առաջնորդ ունենալու հարցը հասունացել է և հնչեցվում է:

*Կանանց հանրապետական խորհրդի դիտարկումներից*

## Անցյալ ու՜ կորուսյալ



Սիպիլ (Զապել Խանջյան-Ասատուր), 1863-1934

# «Կինը, որ Սիպիլ կսպորագրե, պարծանքն է իր սեռին»

**Սա Գրիգոր Զոհրապի գնահատականն է, որը, ի դեպ, հայտնի էր իբրև կնոջ և տղամարդու հավասարության ու կանանց կրթության հակառակորդ:**
**Գրող, մանկավարժ, հրապարակախոս և հասարակական գործիչ Զապել Խանջյան-Ասատուրը (գրական կեղծանունը՝ Սիպիլ) այն սակավաթիվ կանանցից է, որ իր կենդանության օրոք գնահատվեց ըստ արժանվույն: Ժամանակակիցները գովաբանում էին նրա գրական տաղանդը, ստեղծագործություններն ընդգրկվում էին դասագրքերում, թարգմանվում այլ լեզուներով, նրա հասցեին ջերմ տողեր էին շռայլում թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ մտավորականության ներկայացուցիչներ: 1933 թ. Պոլսում, Կահիրեում ու Ալեքսանդրիայում, Փարիզում ու Ֆիլիպեում (Պլովդիվ) մեծ շուքով տոնվեց նրա 70-ամյա հոբելյանը: Մեկ տարի անց նա վախճանվեց, սակայն կանանց ողջ սերնդի հիշողության մեջ մնաց որպես չգերազանցված իդեալ՝ անսահման հմայիչ, նրբաճաշակ, անթերի անաղարտ խոսքով, ազնիվ, վեհանձն և զարմանալիորեն տաղանդավոր Սիպիլ:**

Զապել Խանջյանը ծնվել է 1863 թ. հոկտեմբերի 8-ին Կ.Պոլսի Սկյուտար թաղամասում: Նախնական կրթությունը ստացել է մադամ Կայուսի ֆրանսիական դպրոցում, որն ավարտել է 1870 թ., ապա սովորել Սբ. Խաչ վարժարանում և Սկյուտարի ճեմարանում: Նրա կյանքի այս շրջանին մի դրվագ ճակատագրական նշանակություն է ունենում նրա կյանքում: Նրանց տան նախկին ծառան՝ Հակոբ աղբարը, մեկնում է իր ծննդավայր՝ Քղի և, վերադառնալով անճանաչելիորեն փոխված՝ ցնցոտիների մեջ, Զապելին է պատմում իր համագյուղացիների ծայրահեղ չքավորության, տգիտության ու անօգնականության մասին. *«...Աչքիս առաջեն չի հեռանար թափորը թշվառ տղոց՝ բոկոտն, անլվա, գիսախռիվ, գունատ, հիվանդ, անխնամ,-* գրում է Զապելը իր նամակներից մեկում այդ պատմության տպավորության տակ: - *Քանի-քանի անգամներ երգած եմ իմ հոգիիս բոլոր թափովը Եփրատի ծաղկավետ ափերը, Շավարշանի բուրումնագեղ շուշանները իմ սկսնակի ծախավեր տաղերուս մեջ, և սակայն երբեք չեմ խորհած հոն ապրող տարաբախտ ժողովուրդին վրա: Մեզի սովորեցուցած են շատ մը քաջերու անունները, անոնց պատկերները եթերաճեմ ճաճանչի մը մեջ ամպածրար՝ հայրենիքի սուրբ իդեալն է մեզի համար անմատույց, պաշտելի...: Իսկ Հակոբ աղբարնե՞րը, որոնք հողին վրա կապրին և ոտանավոր ուղերձներե ավելի լուրջ և հիմնավոր դաստիարակության մը պետք ունին իբրև մարդ ապրելու համար: Մենք ոչինչ գիտենք անոնց մասին»:* Հենց այս դեպքից հետո է, որ Զապել Խանջյանը հրավիրում է իր դասընկերուհիներին և նրանց հայտնում «Ազգանվեր հայուհյաց ընկերություն» ստեղծելու իր մտադրության մասին, որը բոլոր հայաբնակ գավառներում իգական դպրոցներ հիմնելու նպատակ ուներ:

Սիպիլը հասարակական ասպարեզ ոտք դրեց 17 տարեկան հասակում և մինչև կյանքի վերջը ակտիվորեն զբաղվեց դրանով՝ այն զուգակցելով ընտանեկան հոգսերի ու գրողի բեղուն ստեղծագործական աշխատանքի հետ: Ուշագրավ մանրամասներ այն մասին, թե ինչպես էր դա նրան հաջողվում, մենք հայտնաբերեցինք այդ շրջանի մամուլում: «Հայրենիք» թերթի թղթակիցը, պատմելով այն մասին, թե ինչպես է Սիպիլն անձամբ գնացել տասնյակ հաստատություններ և գրասենյակներ՝ Ազգանվեր հայուհյաց ընկերության կազմակերպվելիք բարեգործական պարահանդեսի տոմսակները վաճառելու համար, գրում է. *«Վերջին պահուն գնաց աչքե անցնել Նոր թատրոնին արդուզարդը, հաջողություն մաղթեց իր ընկերուհիներուն և թատրոնեն դուրս ելավ: Գիշերը, երբ ամեն ոք կպարեր, կխոսվռտեր, կզվարճանար, Սիպիլ իր փոքրիկ աղջկանը ծյունաթույր անկողնին զայն քնացնելու կաշխատեր»:*

Սիպիլը 19 տարեկան հասակում ամուսնանում է փաստաբան Կարապետ Տոնելյանի հետ, մեկնում գավառներ և զբաղվում ուսուցչությամբ: Հիմնում է օրիորդաց դպրոցներ և միաժամանակ աշխատակցում Պոլսի հայկական մամուլին, որտեղ տպագրվում են նրա մանկավարժական և գրականագիտական հոդվածները: 1891 թ. լույս է տեսնում նրա «Աղջկան մը սիրտը» վեպը, որում մարմնավորում է լուսավորության գաղափարները և, շարունակելով Սրբուհի Տյուսաբի ավանդույթները, փորձում նորովի գնահատել կնոջ դերը հասարակության մեջ: Այս վեպը, ինչպես նաև Սիպիլի մյուս գրական երկերը, լինեն բանաստեղծություններ թե արձակ, հասարակական լայն արձագանք է գտնում:

1901 թ.՝ ամուսնու մահից հետո, ամուսնանում է գրականագետ Հրանտ Ասատուրի հետ, որը անգնահատելի բարոյական աջակցություն է ցույց տալիս նրան թե՛ հասարակական գործերում և թե՛ գրական-ստեղծագործական ու մանկավարժական ոլորտներում: Պոլսում նա հայոց լեզու և գրականություն է դասավանդում և նրա սաների թվում են ճանաչված գիտնական Սիրարփի Տեր-Ներսիսյանը, հրապարակախոս, «Ծաղիկ» և «Հայ կին» հանդեսների խմբագիր Հայկանուշ Մառքը, դաշնակահարուհի Աղավնի Մեսրոպյանը, դերասաններ Արուս Ոսկանյանը, Վահրամ Փափազյանը, թարգմանչուհի Սիրվարդ Կյուլպենկյանը, մանկագիր Ադրինե Տատրյանը և այլք: *«Պոլսո մեջ ոչ մեկ ուսուցիչ կրնա պարծենալ, որ իր անձին ու գործին օրինակով կաղապարած է սերունդ մը կամ դարձած է տեսակ մը իդեալ»:* «*Սիպիլի մեջ մանկավարժն ու տեսաբանը, հոգեբանն ու մեթոդիստը միահյուսված էին: Նա շարքային դասուսույց չէր... Նա անընդհատ որոնում էր նորը, թարմն ու օգտակարը և դրանով էլ տարբերվում նախորդ և ժամանակակից շատ մանկավարժներից»*. սրանք նրա մանկավարժական տաղանդի մասին արձագանքներից են: Սիպիլը նշանակալի ավանդ ունի նաև հայ մամուլի զարգացման գործում: Հրանտ Ասատուրի և Գրիգոր Զոհրապի հետ, նրանց խնդրանքին ընդառաջ գնալով, խմբագրել է «Մասիս» և ապա «Արևելք» օրաթերթերը, միաժամանակ հանդես է եկել բազմաբնույթ հրապարակախոսական հոդվածներով: *«Մեր երբեքն կազմված խմբագրական մարմնին մեջ մեծ ուժ մըն էր Սիպիլ, որ իր տաղանդին ամենեն առույգ ու կորովի շրջանին հասած էր այն ատեն: Միշտ պատրաստ էր հոդված մը, քերթված մը, նորավեպ մը գրելու: Դասերը, դասագիրքերու պատրաստությունը մեկ կողմեն, գրականությունը մյուս կողմեն, տան հոգերն ալ ասոնց ամենուն վրա: Բայց հոգնիլ չէր գիտեր. միշտ ժպիտ մը ուներ դեմքին վրա, միշտ զվարթ էր, միշտ անձնվեր, միշտ բարյացակամ ամենուն հանդեպ: ...Օրվան կինն էր Սիպիլ գրականության մեջ, ու բանաստեղծ կնոջ քով հրապարակագիր կինը ի հայտ կու գար»,-* հիշում է Հ.Ասատուրը:

Սիպիլի հրապարակախոսության առանցքը ազգապահպանությունն է, երիտասարդ սերնդի, հատկապես աղջիկների կրթությունն ու դաստիարակությունը և կանանց հարցերը՝ սկսած խոհանոցից ու նորաձևությունից մինչև քաղաքական իրավունքները: Նրա հոդվածների մի մասն ամփոփված է «Կիսադեմքերը առանց քողի» և «Կիսադեմքերը քողին ետևեն» շարքերում, որոնք ժամանակի մտավորականների ու հասարակական գործիչների՝ Սրբուհի Տյուսաբի, Արշակուհի Թեոդիկի, Գայանե Հովհաննիսյան-Մատակյանի, Հայկանուշ Մառքի, Եղիա Տեմիրճիպաշյանի, Գրիգոր Չիլինկիրյանի, Ռեթեոս Պերպերյանի և այլոց դիմանկարների հարուստ պատկերասրահ են ներկայացնում:

Սիպիլը կարևոր նշանակություն էր տալիս թարգմանական արվեստին, համաշխարհային գոհարների հայացմանը՝ մատուցելով բարձրարվեստ թարգմանություններ (Պոլ Վեռլեն, Լըկոնտ դը Լիլ, Լամարթին, Անատոլ Ֆրանս և այլն), նաև հատուկ աշխատանք է տարել իր աշակերտների շրջանում թարգմանիչների նոր սերունդ պատրաստելու ուղղությամբ:

Իր «Ազգանվեր հայուհիք» հայտնի ճառի մեջ Սիպիլը հիացմունքով է խոսում հայ կանանց կորովի ու անձնազոհության մասին, զարմանքով նկատում, թե ինչպես արյունի ու տվայտանքների մեջ չեն ընկճվում ու պահում են ուսման ծարավը, դեռ ավելին՝ առաջ նետվում «օգնելու, պաշտպանելու, սփոփելու» համար: Եվ օրինակ բերելով անցյալի կանանց՝ դա համարում է հայ ժողովրդի ժառանգական հատկությունը: Նա հավանաբար գիտակցում էր, որ ինքն էլ այդ ժառանգականության փայլուն կրողն է, և հետագա սերունդների բանախոսները արժանի տեղ են տալու իրեն երախտավոր կանանց փաղանգում:

*Պատրաստեց Անահիտ Հարությունյանը*

> «...Աշխատիմք, որպեսզի պարտավոր չմնամք ազգին և մարդկության, աշխատիմք, որպեսզի մեր գավառացի քույրերը լույս առնուն, աշխատիմք, որպեսզի իգական սեռը մարդկության մեջ տեղ մի բռնե... Շատեր կըսեն և պիտի ըսեն, թե չեք կրնար հաջողիլ, սակայն ո՞ր մեծ գործ առաջին փորձով հաջողած է. եթե մեք չիաջողիմք, գեթ հիմը դրած կըլլամք և ուրիշ մը կկատարելագործե զայն...»
>
> **«Ազգանվեր հայուհյաց ընկերության» երկրորդ նիստում 16-ամյա Զապել Խանջյանի ճառից**

## No comment

# «Մեր քաղաքական դաշտին պակասում է կին-տղամարդ ամբողջականությունը»

**«Կինը և քաղաքականությունը» հավելվածի հարցերին պատասխանում է գեղանկարիչ Աշոտ Համբարձումյանը:**

**- Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց քաղաքական գործունեությանը:**

- Ես կնոջը և տղամարդուն համարում եմ մի ամբողջականություն: Մեր քաղաքական դաշտին պակասում է այդ ամբողջականությունը, ինչն էլ դժվարացնում է մեր երկրի կայացումը: Կանանց շատ բարձր եմ գնահատում և կարծում եմ, որ նրանց նույնիսկ վայել չէ լինել քաղաքականության կրողը, այլ վայել է դաստիարակել քաղաքական մեծ գործիչների, լինել նրանց խորհրդականները և կայացնել կարևոր որոշումներ: Այդ որոշումներն իրագործելը կարող է տղամարդու գործը համարվել, եթե այն ֆիզիկական աշխատանք է պահանջում: Եթե այսօր մեր հանրապետությունում որոշ հարցեր այնպես չեն լուծվում, դա բխում է կանանց՝ քաղաքական դաշտում ներգրավվածության պակասից: Կարծում եմ՝ յուրաքանչյուր երկրի նախագահ պետք է նաև կին խորհրդական ունենա: Եթե վերհիշենք մեր պատմությունը, ապա կհամոզվենք, որ մեր պատմական շատ հաղթանակներում առկա է նաև կնոջ մասնակցությունը:

**- Տղամարդկանց մեծամասնությունը թեև չի բարձրաձայնում, բայց հոգու խորքում այն կարծիքին է, որ կինը, լինելով քաղաքական դաշտում, կորցնում է թերևս իր համար ամենակարևոր հատկանիշներից մեկը՝ կանացիությունը:**

- Ցանկացած կին կանացի է, եթե իր կողքին կա առնական տղամարդ, և՝ հակառակը: Եթե կինը կարողանում է հասկանալ իր դերն ու նշանակությունը, ապա ի՞նչ կորստի մասին կարող է խոսք լինել: Վերջապես, կնոջ դերը միայն մայրանալն ու տնային տնտեսությամբ զբաղվելը չէ կամ, լավագույն դեպքում՝ լինել այն օղակներում, որտեղ կարևոր որոշումներ չեն կայացվում: Մենք շատ ենք նվիրված կենցաղին, իսկ կենցաղը խլում է շատ կարևոր արժեքներ:

**- Որոշ տղամարդիկ կասկածի տակ են առնում կնոջ՝ կարևոր որոշումներ կայացնելու ունակությունը, համարում են, որ իրենք ավելի խելացի են, քան կանայք, ուստի որոշում կայացնելը հենց իրենց պետք է վերապահվի:**

- Այս դեպքում խորհուրդ կտամ նախ՝ փորձել հասկանալ կին հասկացությունը, ապա՝ գնահատել նրա արժանիքները: Խորհրդային տարիներին կարող էինք տեսնել անգամ տրակտորիստ կամ սևագործ այլ աշխատանքներ կատարող կանանց, ինչն իսկապես գեղեցիկ չէր: Այդ ժամանակ տղամարդիկ չէին ասում, թե դա կանացի աշխատանք չէ: Իսկ երբ հերթը հասնում է կարևոր որոշումներին կամ պաշտոնին, համարում են՝ կանանց գործը չէ: Վստահ եմ, որ եթե մեր խորհրդարանում ավելի մեծ թվով կանայք լինեին, ապա այնտեղ տիրող մթնոլորտն էլ ավելի քաղաքակիրթ կլիներ: Շատ դեպքերում կինն անգամ մի ժպիտով կարող է ավելի լավ լուծել քաղաքական որևէ հարց, քան՝ ցանկացած տղամարդ իր խելքով: Ի վերջո՝ էականն այն չէ, թե տվյալ հարցը կնո՞ջ, թե՞ տղամարդու ուժերով է լուծվում, կարևորը՝ ինչպիսի՞ն է արդյունքը:

*Զրուցեց Արմինե Գասպարյանը*

## Կանգնեցնել բռնությունը

### Այդ տեղը չի կարող ընտանեկան օջախ կոչվել




Ուղիղ մեկ տարի առաջ Եվրոպայի խորհուրդը քարոզարշավ սկսեց՝ «Կանգնեցնել կենցաղային բռնությունը կնոջ նկատմամբ»: Այս կապակցությամբ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը հայտարարեց. *«Այն տեղը, որտեղ կինը ենթարկվում է վատ վերաբերմունքի, ծեծի ու նվաստացման, չի կարող ընտանեկան օջախ կոչվել: Սա զնդան է, որի կալանավորները զամված են բռնության շղթային, և Եվրոպայի խորհուրդը ձգտում է օգնել նրանց ազատվելուն»:*

Գլխավոր քարտուղարի տեղակալ Մոդ դը Բուր-Բուկիկիոյի կարծիքով՝ կարևորը *«բռնության զոհ դարձած կանանց բացատրելն է, որ իրենք ունեն պաշտպանության և օգնության իրավունք, ինչպես նաև այն, թե որտեղ և ինչպես կարող են դրանցից օգտվել»:*

ԵԽԽՎ տվյալներով՝ ամեն տարի Եվրոպայում ընտանեկան բռնության հետևանքով զոհվում է մոտ 600 կին:

### 19-ամյա բռնաբարության զոհը դատապարտվեց



Սաուդյան Արաբիայի դատարանը 19-ամյա բռնաբարության զոհին դատապարտել է պատժի: Երկրի արդարադատության նախարարը դատարանի որոշումը արդարացի է համարել, քանի որ, նրա խոսքերով, բռնաբարության զոհ դարձած կինը գտնվել է մեքենայում մի տղամարդու հետ, որը նրա ազգականը չէր: Տղամարդը եղել է աղջկա ծանոթը: Սակայն ամենևին էլ ինքը չի եղել բռնացողը:

Մեքենան, որում գտնվել են երիտասարդ մարդիկ, կանգնեցրել է յոթ մարդուց բաղկացած մի հրոսակախումբ: Երկուսին էլ դաժանորեն լլկել են: Հանցագործներից չորսը մեղավոր են ճանաչվել մարդկանց առևանգման հոդվածով: Նրանց զոհերին նույնպես պատիժ է սահմանվել՝ յուրաքանչյուրին ճիպոտի 90 հարված՝ «անօրինական հարաբերությունների համար»:

Սակայն հետագայում դատարանը որոշեց խստացնել պատժամիջոցը 19-ամյա աղջկա նկատմամբ և ճիպոտի հարվածները հասցրեց մինչև 200-ի, ինչպես նաև նրան դատապարտեց կես տարվա ազատազրկման: Աղջկան պաշտպանելու համար կոչված փաստաբանին թույլ չտվեցին դատարանի դահլիճ մտնել, իսկ հետագայում ընդհանրապես զրկեցին փաստաբանական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայից:

Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը մտավախություն ունի, որ այդ դատավճիռը կնպաստի նրան, որ մահմեդական երկրներում բռնության զոհերը կվախենան դատարան դիմելուց:

Օրերս հայտնի դարձավ, որ միջազգային արձագանքներից հետո որոշվեց վերանայել դատարանի վճիռը:

### 21-րդ դարի ստրուկները

Ժամանակակից ստրուկների ստույգ թիվը հայտնի չէ: 2002 թ. Աշխատանքի միջազգային կազմակերպությունը հրապարակել է մի զեկույց, ըստ որի հարկադիր (այսինքն՝ փաստորեն ստրկական) աշխատանքով աշխարհում զբաղվում է 12,3 մլն մարդ: Կան ավելի ցնցող գնահատականներ: Anty-Slavery կազմակերպության փորձագետները վկայում են, որ ժամանակակից աշխարհում հաշվվում է մինչև 200 մլն ստրուկ:

Միջազգային մասշտաբով՝ ստրկավաճառների զոհերի 77%-ը կանայք են, 33%-ը՝ երեխաներ: 87% դեպքերում նրանց օգտագործում են սեքսուալ շահագործման համար: Ըստ ՄԱԿ-ի գնահատականների՝ ամեն տարի աշխարհում մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) զոհ են դառնում մինչև 4 մլն կանայք ու երեխաներ (Եվրոպայում՝ մինչև 500 հազ.): Ու նույնիսկ կրիմինալ ցանցերից դուրս պրծնելով՝ տանը նրանք բախվում են նոր փորձության՝ շրջապատի կողմից դատապարտման:

### «Սպիտակ ժապավեն»




Սպիտակ ժապավենը խորհրդանշում է տղամարդկանց ու կանանց միասնությունը ընդդեմ դաժանության ընտանեկան հարաբերություններում: Այդ քարոզարշավը սկսվել է Կանադայում տեղի ունեցած ողբերգությունից հետո, երբ մոլագարը կրակել էր ինժեներական ուսումնարանի 14 ուսանողուհիների: Կանադայի խորհրդարանի որոշումով՝ դեկտեմբերի 6-ը հայտարարվեց զոհերի հիշատակի և կանանց նկատմամբ բռնությունների դեմ գործողությունների օր: Իսկ սպիտակ ժապավենը կապեցին հարյուր-հազարավոր տղամարդիկ:

**Հավելվածը հրատարակվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ**

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան

Տպաքանակը՝ 7000 օրինակ